ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԿ ԱՋԱՌՅԱՆ

Մեծ Հոկտեմբերի քառասնամյակի նշումը վերածվեց համաժողովրդական մի խանդավառ տոնակատարության, որն ուրամարանորեն բխում էր Սովետական Միության վիթխարի վերելքից՝ մեր կյանքի բոլոր բնագավառներում։ Պատմության մեջ առաջին անգամ իր վիճակի տեր ու տնորեն դարձած ժողովուրդն իր հերոսական ջանքերի ու վսեմ շինարարության արդյունքների ստուգատես էր կատարում, կազմում էր իր նվաճումների ու թերությունների, իր ակտիվի ու պասսիվի բալանսը, որպեսզի կուտակած նյութական ու բարոյական ֆոնդերի ավելի նպատակահարմար օգտագործման և իր թերությունների վերացման միջոցով ձեռնարկի է՛լ ավելի լայն շինարարական աշխատանքի, իր նոր ծրագիրները քանակապես ու որակապես իրագործի է՛լ ավելի արագ տեմպերով և մաքսիմալ չափերով մոտեցնի կոմունիստական հարաբերությունների հաստատման մոմենտը։

Սոցիալիստական շինարարության պատմական խոշորագույն հաջողություններն ամենամեծ չափով պայմանավորված էին նրանով, որ այդ ամբողջ աշխատանքը գիտականորեն հիմնավորված, հիանալի կազմակերպված ու պլանավորված էր և կատարվում էր միաժամանակ կյանքի բոլոր բնագավառներում, հիմնովին հեղաշրջելով ոչ միայն մեր երկրի տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, այլև մեր ժողովրդի գոյության ու զարգացման կուլտուրական պայմանները։ Ինչպես քաղաքականությունը չի կարելի զատել տնտեսությունից ու կուլտուրայից, այնպես էլ կուլտուրան չի կարելի դիտել առանձնացած վիճակում՝ անկախ տնտեսությունից ու քաղաքականությունից։ Սովետական ժողովրդի մտավոր ու բարոյական զարգացման պրոցեսում տեղի ունեցած ռևոլյուցիան և ընդհանրապես նրա նոր աշխարհայացքը սոցիալիզմի հաղթանակի անհրաժեշտ նախադրյալներն էին։ Սովետական երկրի բոլոր ժողովուրդները, պահպանելով հանդերձ իրենց պատմական անունները, սոցիալիստական վերածննդի հետևանքով դարձել են բոլորովին նոր ժողովուրդներ թե՛ իրենց դասակարգային կազմով ու փոխադարձ հարաբերություններով, և թե՛ իրենց ամբողջ հոգեկան աշխարհով, իրենց ապրումներով ու իդեալներով։ Ըստ այդմ խորագույն հեղաշրջման են ենթարկվել նաև մեր գիտությունը, գրականությունն ու արվեստը։ Այս ընդհանուր կանոնից բացառություն չի կազմում և չէր էլ կարող կազմել սովետական ժողովուրդների պատմագրությունը։

* * *

Հազարավոր տարիների ընթացքում մարդկային հասարակության պատմությունը եղել է դասակարգերի պայքարի պատմություն։ Սակայն 1848 թվականի Եվրոպական ռևոլյուցիաներից հետո և նամանավանդ Փարիզի Կոմունայից հետո բուրժուական պատմագիրների մեծ մասը ժողովուրդների զարգացման ելակետ է համարել ազգային շահերը կամ դաղափարական ու բարոյական այս կամ այն սկզբունքները։ Մարդու հասարակական կյանքի ռեալ պատմությանը հակասող ու հակագիտական այս տեսակետը գերիշխող էր հանդիսանում նաև Ռուսաստանի բոլոր ժողովուրդների պատմագրության մեջ, ընդ որում դասակարգային պայքարի որոշիչ դերը պատմության մեջ այնքան ավելի էր ժխտվում, որքան տվյալ ժողովուրդն ավելի հետամնաց կամ ճնշված էր։ Խոշոր պատմագիրները մերթընդմերթ, այն էլ անուղղակի կերպով ու երկչոտությամբ, նշում էին դասակարգային պայքարի առանձին դեպքերը, սակայն բնութագրելով այս վերջինները որպես բացառիկ ու անցանկալի դեպքեր, որոնք «իրենց» ժողովրդի «ոգուն» բնավ չեն համապատասխանում և որոնց հետագա զարգացումը տանելու է դեպի դասակարգային շահերի ներդաշնակություն, ուրեմն և դեպի դասակարգային պայքարի մեղմացում ու վերացում։ Զափազանց բնորոշ է, որ ուրիշ ժողովուրդների նկատմամբ այդ նույն պատմագիրներն ընդունում էին թե՛ շահագործումը, և թե՛ դասակարգային պայքարը։

Բուրժուական պատմագրության մի այլ թերությունը դրսևորվում էր նրանում, որ պատմագիրների զգալի մասը պատմությունը վերլուծում և շարադրում էր մետաֆիզիկորեն, այնպես, կարծես թե տոհմատիրական կամ ստրկատիրական շրջաններից ի վեր մինչև մեր օրերը ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքում և մարդկանց մտածողության մեջ որևէ որակային փոփոխություն տեղի չի ունեցել։

Արդեն մինչև 1917 թվականը Ռուսաստանի կուլտուրական ժողովուրդներն ունեին հարուստ պատմական գրականություն, սակայն բուրժուական պատմագիրների նույնիսկ խոշորագույն աշխատությունները տեսական բովանդակությամբ չափազանց աղքատիկ էին։ Բուրժուական պատմաբանները մեծ մասամբ հարում էին Շեֆֆլեի կամ Սպենսերի խառնիճաղանջ թեորիաներին, նարոդնիկական սուբյեկտիվ իդեալիզմին կամ, լավագույն դեպքում, աշխարհագրական միջավայրի չափազանց սահմանափակ ուսմունքին։ Բնական է, որ պատմության ամբողջ պրոցեսը նրանք վերագրում էին իշխող դասակարգերի ականավոր ներկայացուցիչներին, իսկ ոմանք՝ նույնիսկ նախախնամությանը կամ բացարձակ ոգուն։ Նրանցից շատերը կողմնակից էին գոնհիկ էվոլյուցիոնիզմի ուսմունքին, մարդկային հասարակության պատմության ընթացքը հնարավոր էին համարում լուսաբանել բիոլոգիական ընդհանուր օրենքներով, գիտության շահերը գոհարերում էին ազգայնական, ռասայական, կրոնական ու այլ ռեակցիոն ծրագրերի շահերին, և անընդունակ դտնվեցին կազմելու համապատասխան ժողովուրդների օբյեկտիվ ու ճշմարիտ պատմությունը։ Նրանց բազմահատոր ու մեծածավալ գործերում, ուր հսկայական փաստական նյութ էր բարձրացված, անմշակ մնացին պատմագիտության այնպիսի խոշոր ու վճռական նշանակություն ունեցող սկզբունքային հարցեր, որպիսիք են պատմության բաժանումը հասարակական-տնտեսական ֆորմացիաների, պատմական զարգացման և պատմական օրինաչափությունների օբյեկտիվ բնույթը,

պատմական նախատեսության հնարավորությունը, աշխատավոր մասսաների դերը պատմության մեջ և նման մի շարք այլ հարցեր։

Ռուսաստանի բուրժուական պատմագրությունը հետևողական կերպով արտահայտում էր իշխող դասակարգերի քաղաքական իդեալներն ու ձգտումները։ Իսկ քանի որ ռուսական բուրժուազիան ռևոլյուցիոն ձգտումներ ու ռևոլյուցիոն պարտիաներ երբեք չէր ունեցել, այլ սահմանափակվում էր լիբերալ քաղաքականությամբ և ռևոլյուցիայից շատ ավելի էր վախ կրում, քան ցարիզմից, ապա նրա իդեոլոգիայի արտահայտիչ հանդիսացող բուրժուական պատմագրությունը ևս չէր կարող ճեղքել լիբերալիզմի նեղ շրջանակները։

Պատմագրության մեջ խոշորագույն հեղաշրջում կատարեց գիտության կորիֆեյ և պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը։ Արդեն 1890-ական թվականներին լույս ընծայած իր հանճարեղ գործերում, ելնելով Մարքսի և Էնգելսի պատմական ուսմունքի սկզբունքներից, Լենինը ռուս ժողովրդի պատմությունը բաժանեց հասարակական-տնտեսական ֆորմացիաների, ակնհայտորեն ցույց տվեց ռուս հասարակության դասակարգային կառուցվածքը և դասակարգային պայքարի վճռական դերը ռուս ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում։

Ռուս ժողովրդի պատմագրությանը Լենինի կողմից մատուցած այս ծառայության մեծությունը ճշտորեն գնահատելու համար բավական է վերհիշել, որ դարեր շարունակ, մինչև 1861 թվականը, ռուս ժողովուրդն ապրել էր ֆեոդալական կարգերում, սակայն, տարօրինակ կերպով, ռուս պատմագիրների մեծամասնությունը կամ ժխտում էր ֆեոդալիզմի առկայությունը Ռուսաստանի պատմության մեջ, կամ այն ընդունում էր բազմաթիվ վերապահումներով։ Միայն 1897—1902 թվականներին Պավլով-Սիլվանսկին ցույց տվեց, որ Ռուսաստանում իրոք եղել է ֆեոդալիզմի դարաշրջան և որ ռուսական ֆեոդալիզմը հիմնականում նմանվել է Եվրոպայի ֆեոդալիզմին։ Սակայն Պավլով-Սիլվանսկուն չհաջողվեց տալ ռուսական ֆեոդալիզմի ճշգրիտ պատկերը։ Ֆեոդալիզմը նա համարում էր լոկ իրավաբանական մի կառուցվածք և նրա տիրապետությունը Ռուսաստանում հասցնում էր միայն մինչև XVI դարի կեսերը։

Լենինը առաջինն էր, որ զարգացնելով Մարքսի ուսմունքը, այս բարդ ու կնճռոտ հարցին ևս տվեց լիովին բավարար լուծում և դրանով ստեղծեց ռուս ժողովրդի գիտական պատմությունը կազմելու ամենակարևոր նախադրյալներից մեկը։ Լենինը նախ ցույց տվեց, որ ֆեոդալիզմը մի որոշ հասարակական-տնտեսական ֆորմացիա է, մի որոշ տնտեսական-քաղաքական ամբողջություն իրեն հատուկ բազիսով ու վերնաշենքով, և որ նրա էության լիակատար ըմբռնումը լոկ իրավաբանական տեսակետից կատարելապես անհնարին է։ Այնուհետև նա ապացուցեց, որ ֆեոդալիզմի տիրապետությունը Ռուսաստանում տևել է «Ռուսկայա Պրավդայի» ժամանակից մինչև 1861 թվականը, որ հետևապես Ռուսաստանը ոտք է կոխել կապիտալիզմի դարաշրջանը ոչ թե XVIII դարի սկզբներին, այլ միայն 1861 թվականի ռեֆորմներից հետո։

Այս հետազոտմանը զուգընթաց Լենինը իր աշխատություններում բազմիցս շոշափում է ռուսական պետության սոցիալական հիմքի ու նրա կոչման խնդիրները։ Ինչպես ամենուրեք, պարզաբանում է Լենինը, Ռուսաստանում ևս պետությունն իր գոյության ամբողջ ընթացքում եղել է ոչ թե ամբողջ ժողովրդի, այլ շահագործող դասակարգերի ներկայացուցիչն ու պաշտպանը, կոչված լի-

նելով ամեն կերպ աջակցել շահագործման կազմակերպմանը և ապահովել աշխատավոր մասսաների հնազանդեցումը տիրապետող դասակարգերին։ Ինչ վերաբերում է հատկապես ցարիզմին, նրա պատմությունը Լենինը բաժանում է մի քանի շրջանի, համապատասխան այն փոփոխություններին, որոնք երեք դարի ընթացքում տեղի են ունեցել երկրի սոցիալ-տնտեսական կյանքում։ Այլ բան էր ցարիզմը XX դարի սկզբում և մի ուրիշ բան՝ XVII դարում։

Հատուկ ուշադրության են արժանի Լենինի հայացքները ռուս ժողովրդի պատմական զարգացման օրինաչափությունների բնույթի մասին։ Կռվելով ազգայնական ու նարոդնիկական նախապաշարումներին կառչած պատմագիրների դեմ, Լենինը գտնում էր, որ «ռուս մարդը մի ինչ-որ հատուկ մեռոնով չի օծված», որ հետևապես ռուս ժողովրդի պատմական զարգացումը հիմնականում ընթանում է նույն ուղիներով, որոնք բնորոշ են մյուս ժողովուրդների համար, որ մանրամասնություններում շեղումները հնարավոր ու անխուսափելի են՝ համապատասխան տվյալ ժողովրդի գոյության տեղային ու պատմական կոնկրետ պայմաններին։ Սկզբունքներն ուղղագիծ են, գրում է մեր մեծ ուսուցիչը, բայց նրանց մարմնացումը կյանքում կատարվում է զիգզագներով։

Հասարակական-տնտեսական ֆորմացիաների և դասակարգային պայքարի խնդիրներին Լենինն անդրադառնում է իր բոլոր խոշոր գործերում։ Իսկ մարքսիզմ-լենինիզմի այդ կարևորագույն խնդիրներով զբաղվողների առաջ ինքնըստինքյան ծառանում է այն հարցը, թե մարդկային հասարակության զարգացման պրոցեսում ի՞նչ դեր են խաղում անհատները ու մասսաները, ժողովուրդներն ու նրանց կազմի մեջ մտնող դասակարգերը, պարտիաներն ու նրանց առաջնորդները։ Այս բոլոր հարցերին տված իր հայտնի կլասիկ պատասխաններով Լենինը մեծապես հարստացրեց մեր պարտիական գրականությունը և հատկապես ուժեղ զարկ տվեց մեր պատմագիտության զարգացմանը։ Առանձնապես աչքի է ընկնում Լենինի հանդես բերած խանդավառությունն այն բոլոր դեպքերում, երբ նա անդրադառնում էր աշխատավոր մասսաների պատմական ստեղծագործությանը՝ ռևոլյուցիոն շրջաններում։

XIX—XX դարերի Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունն ամբողջապես շարադրված է ըստ Լենինի, որը այդ պատմությունը բաժանեց համապատասխան փուլերի, տվեց յուրաքանչյուր փուլի սոցիալական բնութագրումը, որոշեց Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շարժիչ ուժերը և ըստ այդմ նրա խոշոր տարբերությունը Արևմուտքի բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիաներից, բազմակողմանիորեն մշակեց պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի անհրաժեշտության հարցը, ցույց տվեց դեմոկրատիզմի ու լիբերալիզմի տեղն ու դերը Ռուսաստանի առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի պրոցեսում, կատարեց խոշորագույն հետևանքներով հզի մի այնպիսի վիթխարի պատմական հայտնագործում, որպիսին է պրոլետարիատի հեգեմոնիան Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի պրոցեսում և այդ ռևոլյուցիայի վերաճումը սոցիալիստական ռևոլյուցիայի։

1905—1907 թվականների ռևոլյուցիոն շարժումները և տասնյակ ապստամբությունները գործնականապես ապացուցեցին Լենինի այս խորիմաստ ու զարմանալիորեն ամբողջական ուսմունքի ճշմարտությունը, մի ուսմունք, որը հետագայում պսակվեց ոչ պակաս խոշոր պատմական հայտնագործություններով՝ իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիայի հարցերի բնագավառում։

Իր պատմագիտական ուսմունքով Լենինը իր հետևորդներին ժառանգություն թողեց մի զարմանալի հզոր գաղափարական զենք, որը նրանց առջև գիտական աշխատանքի և սկզբունքային պայքարի ամենալայն հորիզոններ է բացում և որից նրանք բարեխղճորեն օգտվում են, ամեն կերպ ձգտելով մաքրել հասարակական գիտությունների բնագավառում դարերի ընթացքում գոյացած ավգյան ախոռները և ստեղծել հետևողական մարքս-լենինյան պատմական գիտություն՝ պրոլետարիատի իդեական պայքարի այդ ամենագործուն ու ամենակարևոր զենքերից մեկը։

* * *

1890 թվականին գերմանական սոցիալ-դեմոկրատ Կ. Շմիդտին հասցեագրած իր նամակում Ֆր. Էնգելսը այն միտքն էր հայտնում, որ «պետք է ձեռնարկել ամբողջ պատմության նոր ուսումնասիրություն։ Էնգելսը նկատի ուներ իրական պատմության կատարյալ աղճատումը և խեղաթյուրումը բոլոր ժամանակների իշխող դասակարգերի և նրանց պատմագիրների կողմից։ Այն դեպքում, երբ պատմագրությունը լիներ օբյեկտիվ, անաչառ և ճշմարտացիորեն արտացոլեր իրական պատմությունը, ապա հենց միայն դրանով իշխող դասակարգերն իրենք իրենց համար դերեզման փորած կլինեին, պատմագրական յուրաքանչյուր աշխատություն կներկայացներ իշխող դասակարգերի դեմ ուղղված մի ծանրակշիռ մեղադրական ակտ։ «Ինչ են ժողովրդի բարեկամները և ինչպես են նրանք մարանչում սոցիալ-դեմոկրատների դեմ» սքանչելի գործի ծանոթագրություններից մեկում Լենինը նշում է, որ ռուս ժողովրդի ամբողջ պատմությունը և ցարիզմի ներքին քաղաքականությունը վկայում են, որ ցարական պետության խնդիրն էր՝ պաշտպանել միայն կալվածատեր-ճորտատերերին ու խոշոր բուրժուազիային և ամենագազանային կերպով ճնշել աշխատավոր մասսաներին ամեն անգամ, երբ նրանք փորձում էին պաշտպանել իրենց շահերը։ Ցարիզմի քաղաքականությունը Կ. Մարքսը և Լենինը բազմիցս բնութագրել են, որպես «հանցավոր քաղաքականություն»։ Նույնիսկ անգլիացի լիբերալ պատմագիր Թ. Ռոջերսը, աշխատանքի և աշխատավարձի պատմությանը նվիրած իր հայտնի աշխատությունում (1883) հանդում էր այն եզրակացության, որ 1563—1824 թվականների ընթացքում Անգլիայի ամբողջ պատմությունը ներկայացրել է ոչ այլ ինչ, քան իշխող դասակարգերի ձեռքով կազմակերպված և օրենքի կողմից ճանաչված մի դավադրություն, ուղղված աշխատավոր մասսաների դեմ՝ վերջիններիս ճնշելու, թալանելու և անհուսալի վիճակի մեջ գցելու նպատակով։

Բնական է, որ ոչ մի շահագործող դասակարգ և ոչ մի ֆեոդալական կամ բուրժուական կառավարություն չեն կարող հանդուրժել, որ իրենց քաղաքականությունը որակվի որպես հակաժողովրդական, հանցավոր, դավադրական, գազանային և այլն։ Ֆեոդալիզմի դարաշրջանի համարյա բոլոր պատմությունները և տարեգրությունները կազմված են համապատասխան իշխանների պատվերներով։ Նույնը քողարկված ձևով շարունակվում է բուրժուական կարգերում։ Նման պայմաններում հորինվող պատմական գործերից օբյեկտիվություն սպասելու համար պետք է ծայրահեղ միամիտ լինել։

Միայն պրոլետարական դիկտատուրայի տիրապետության պայմաններում, առաջին անգամ մարդկային հասարակության պատմության մեջ, պատմագրությունը լիակատար հնարավորություն ստացավ օբյեկտիվորեն շարա-

գրելու մարդկային հասարակության պատմությունը և ամենից առաջ՝ դասակարգային պայքարի պատմությունը։ Բնական է, որ ՍՄԿՊ-ն և Սովետական իշխանությունը չէին կարող սահմանափակվել գիտության զարգացման համար անհրաժեշտ քաղաքական պայմաններ ստեղծելով միայն։ Մեր բոլոր ռեսպուբլիկաներում կազմակերպվեցին բազմաթիվ գիտական ինստիտուտներ, որոնք պետության կողմից լիովին ապահովվում են կադրերով և նյութապես։ Կարգի բերվեցին արխիվները, հրատարակվեցին մեծ քանակությամբ բարձրարժեք արխիվային նյութեր։ Սովետական Միության բազմաթիվ շրջաններում կազմակերպված հնագիտական պեղումները պատմագիտությանը ոչ միայն հարուստ նյութ մատակարարեցին, այլև զգալի չափերով ընդլայնեցին մեր հորիզոնները պատմության ընդգավառում։

Սովետական ժողովուրդների պատմության գիտական լուրջ ուսումնասիրությանը մեծագույն չափով զարկ տվին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի ժողովածուների բազմապատիկ հրատարակությունները, այն էլ վիթխարի տպաքանակներով։ Եթե այսօր մենք ունենք համոզված սովետական ինտելիգենցիայի բազմամիլիոն մի բանակ, և եթե պատմագիտության ճակատում գործող մասնագետներին հաջողվել է մարքս-լենինյան ռելսերի վրա գնել սովետական ժողովուրդների պատմությունը, հաղթահարել Պոկրովսկու վուլգար-սոցիոլոգիական «շկոլան» և ստեղծել հարյուրավոր աշքի ընկնող գործեր, դրանով ամենամեծ չափով պարտական ենք Մարքսի, Էնգելսի և Լենինի երկերի հրատարակությանը և դրանց լայն տարածմանը։ Նույն ուղղությամբ խոշորագույն դեր կատարեց նաև ՍՄԿՊ համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների որոշումների հրատարակությունը։ Մարքսիզմ-լենինիզմը դարձավ սովետական ամբողջ գիտության տեսական ելակետն ու հիմնաքարը, թափանցեց մեր առօրյա կյանքը, իր վեհությամբ համակեց տասնյակ միլիոնավոր աշխատավորների և դարձավ մեր կուլտուրական ռևոլյուցիայի առանցքը, սովետական մարդու սոցիալիստական վերածնման հզորագույն զենքը, նրա դատողության, հոգևոր ապրումների, նրա ամբողջ ներքին աշխարհի ուղն ու ծուծը։ Պատմագրության ճակատի աշխատողներն իրավունք ունեն հպարտանալու նրանով, որ մարքսիզմ-լենինիզմի ներգործությունը ուժեղ չափով արտահայտվել է նաև իրենց աշխատանքի ընդգավառում և որ իրենք խոշոր չափով օգտվել են մարքսիզմ-լենինիզմի հարուստ գանձարանից։

Փաստ է, որ Սովետական Միության համարյա բոլոր ժողովուրդները կազմել և արդեն հրապարակել են իրենց պատմությունները, ելակետ ունենալով մարքսիզմ-լենինիզմի մեծ ուսմունքը, որի հիման վրա միայն հնարավոր է գիտականորեն լուծել պատմական խոշոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, որպիսիք են դասակարգերի ու պետությունների ծագումը, ազգությունների առաջացման ու ձևավորման երկարատև պրոցեսը և դրանց տարբեր դասակարգային կազմը կապիտալիզմի ու սոցիալիզմի պայմաններում, արտադրական հարաբերությունների, պետական իշխանությունների և կուլտուրաների փոխադարձ կապը, ինչպես և դրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը տվյալ երկրի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում։

Այս բարդ, դժվարին ու ազնիվ աշխատանքը սովետական ժողովրդի ամենայայն խավերում վերջնականապես հաստատեց այն համոզմունքը, որ մեր երկրի բոլոր ժողովուրդները, կատարելապես անկախ իրենց ռասայական, ազգային ու կրոնական պատկանելությունից, բարոյական-քաղաքական մի ամ-

բողջություն են կազմում և որ մենք ունայնորեն չենք գործածում սովետական ժողովուրդ արտահայտությունը, թեև այդ ժողովուրդը բաղկացած է մի քանի տասնյակ ազգություններից։

Սովետական Միության ժողովուրդներից յուրաքանչյուրի պատմության բաժանումը հասարակական-տնտեսական ֆորմացիաների, դրանցից յուրաքանչյուրի բնութագրումը տվյալ կոնկրետ պայմաններում, դասակարգային պայքարի և պատմության օբյեկտիվ օրինաչափության ուսմունքների հետևողական կիրառումը պատմագրության բոլոր բնագավառներում,— ահա այս է այն խոշորագույն առաջադիմական քայլը, որ սովետական պատմագիտությունը կատարել է իր քառասնամյա գոյության ընթացքում։

Այդ նվաճման կարևորությունը ցույց տալու համար բավական է նշել, որ ցարական Ռուսաստանի ժողովուրդների մեջ ամենահարուստ պատմական գրականությունը ուներ ռուս ժողովուրդը, սակայն Ռուսաստանի պատմության բուրժուական դպրոցին այնպես էլ չհաջողվեց ազատագրվել պատմական պրոցեսի մասին իր ներկայացուցիչների աղոտ հայացքներից և պարզել, օրինակ, թե ինչու Ռուսաստանը ստրկատիրական ֆորմացիա չի ապրել, ինչ է ֆեոդալիզմը և հասարակական այն կարգը Ռուսաստանում, որ դարերով իշխել է, ֆեոդալիզմի փուլում կապիտալիզմի համար ինչ նախադրյալներ էին հասունացել, Ռուսաստանում կապիտալիզմը երբ է հաստատվել, ինչ ուղիներով է ընթացել և ինչ ուղիներով կարող էր ընթանալ, ինչով էին պայմանավորվում Ռուսաստանի հասարակական շարժումները նրա պատմության ամբողջ ընթացքում, ինչու ռուս բուրժուազիան երբեք ռևոլյուցիոն քաղաքականություն չի վարել և այլն։

Երկու հակադիր դասակարգերի պատկանող և այդ հակադիր դասակարգերի հասարակական գիրքերն ու իդեոլոգիան պաշտպանող պատմագիրները միմյանցից տարբերվում են ոչ թե մանրամասնություններում, այլ իրենց սկզբունքներով, իրենց ամբողջ աշխարհայացքով, իրենց հակադիր վերաբերմունքով դեպի պատմական խոշորագույն խնդիրները։

Սուր պայքարի և տանջալի որոնումների պրոցեսում է, որ սովետական պատմագրությանը հաջողվեց ստեղծել բազմաթիվ օրինակելի պատմական գործեր։ Մոսկվայի և Լենինգրադի պատմագիտական հիմնարկները մեր երկրի բոլոր ժողովուրդների պատմագիտության առջև լայն ու դեպի հեռուները տանող պողոտաներ բացեցին։ Մենք մեծապես այդ օգնությանն ենք պարտական նրանով, որ նույնիսկ անցյալում հետամնաց մի շարք ժողովուրդներ այսօր կազմել և հրատարակել են իրենց իսկական պատմությունները։ Էլ չենք խոսում ուկրաինացիների, վրացիների ու հայերի պատմությունների մասին։ Որպես կանոն, այս բոլոր ժողովուրդների մոտ մարքսիստների պայքարը ֆեոդալական ու բուրժուական պատմագրության դեմ խոշոր դժվարությունների էր հանդիպում և իր հաղթանակի համար շատ եռանդ ու ժամանակ էր պահանջում։ Պայքարն առանձնապես սուր կերպարանք էր ստանում պատմագրության համար այնպիսի կարևորություն ներկայացնող խնդիրների շուրջը, որպիսիք են շահագործումը և դասակարգային պայքարը, պետության և ազգության ծագումը, ժողովրդական մասսաների և իշխող դասակարգերի ու սրանց իշխանների դերը համապատասխան ժողովրդի պատմության մեջ, վերածննդի դարաշրջանի առկայությունը այս կամ այն ժողովրդի անցյալում, դեմոկրատիզմի ու լիբերալիզմի դերը գաղափարական հոսանքներում և հասարակական շարժում-

ների մեջ, իշխող դասակարգերի կողմից ցարիզմի դեմ ուղղված պայքարի սոցիալական բնույթը, ազգային-ազատագրական շարժումների գնահատականը և այլն։ Սովետական մի քանի ժողովուրդների մոտ այս հարցերի մի մասն այս ր էլ շարունակում է մնալ վեճի առարկա։

Խոսելով Սովետական Միության ժողովուրդների պատմագրության մասին, չի կարելի անտեսել մի կարևոր թերություն։ Մենք նկատի ունենք սովետական առանձին պատմաբանների մոտ արմատացած սովորությունը, որի համաձայն չափազանցությունների մեջ ընկնելով նրանք գերագնահատում են իրենց ազգային կուլտուրան և այն համարում բացառապես տվյալ ժողովրդի ներքին կյանքի պայմանների արդյունքը։ Այս կարգի գործերում խեղաթյուրվում է պատմությունը՝ հանուն կեղծ հայրենասիրության։ Նրանց հեղինակները չպետք է մոռանան, որ յուրաքանչյուր ազգային պատմություն համաշխարհային պատմության մի անբաժանելի մասն է։ Ինչպես չկա մաքուր ոսկ կամ դրսի ազդեցությունից ազատ ու անկախ լեզու, այնպես էլ չկա դրսի աշխարհից կտրված պատմություն ու կուլտուրա։ Պատմագրության այս մեթոդը համապատասխան ժողովրդին ոչնչով չի օգնում, բայց անպայման վնասում է՝ նրա շարքերում տարածելով մեծամտություն ու նացիոնալիզմ, նրան մեկուսացնելով հարևան ժողովուրդներից, սահմանափակելով նրա մտավոր հորիզոնը, զրկելով տվյալ ժողովրդին ուրիշների առաջադիմությունից օգուտ քաղելու ազդակներից։

Չնայած դեռևս գոյություն ունեցող որոշ թերություններին, Սովետական իշխանության տարիներին մեր պատմագրությունը ձեռք է բերել խոշոր հաջողություններ։ Դրանում համոզվելու համար բավական է աչքի անցկացնել այն հարուստ պատմական գրականությունը, որ լույս են ընծայել պատմության գիտական ինստիտուտները, ԲՈՒՀ-երի պատմության ամբիոնները, արխիվային և համապատասխան այլ հիմնարկները։

Այդ գրականության մեջ առաջին տեղն անպայման գրավում է «ՍՍՌՄ պատմության ուրվագծեր» վերնագիրը կրող բազմահատոր և վերին աստիճանի լուրջ հրատարակությունը, որի «արդեն լույս տեսած յոթ մեծածավալ հատորներն ընդգրկում են մեր երկրի ժողովուրդների պատմությունը ընդհուպ մինչև XVIII դարի վերջերը։ Այդ աշխատությունն առանձնապես աչքի է ընկնում նրանով, որ ֆեոդալիզմի ծագումը և նրա զարգացման ամբողջ պրոցեսը շաղկապում է համապատասխան տնտեսական պայմանների և դասակարգային պայքարի հետ, տալիս է ֆեոդալիզմի էության հետևողական մարքս-լենինյան բնորոշումը, ֆեոդալական հասարակության պետական ձևերը պայմանավորում է իշխող արտադրական հարաբերություններով և տնտեսական զարգացման համապատասխան մակարդակով, մեծ տեղ է նվիրում ֆեոդալական դարաշրջանի կուլտուրային, ըստ որում այդ կուլտուրան ոչ թերագնահատում է, ինչպես այդ անում են բուրժուական շատ պատմագիրներ, և ոչ էլ գերագնահատում, ինչպես ֆեոդալիզմի ջատագովները։

Այս օրինակելի աշխատությանը հարում և այն շատ կողմերից լրացնում են մի քանի տասնյակ կարևոր գործեր, որոնց մեջ առանձնապես աչքի են ընկնում տարեգրությունների և միջնադարյան օրենսգրքերի մի շարք չափազանց արժեքավոր գիտական հրատարակություններ, դրանց թվում՝ «Ռուս իրավունքի հուշարձանները» (առայժմ չորս հատոր), Պ. Ի. Լյաշչենկոյի հայտնի աշխատությունը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմության մասին (3 հա-

տոր), Բ. Դ. Գրեկովի աշխատությունները՝ Կիևյան Ռուսիայի պատմության և ռուս գյուղացիների պատմության մասին, հին Ռուսիայի կուլտուրային նվիրված երկհատորյակը, Բ. Ա. Ռիբակովի աշքի ընկնող աշխատությունը հին Ռուսիայի արհեստի մասին, «Դիվանագիտության պատմության» եռհատորյակը, Մ. Ն. Գերնետի «Ցարական բանտի պատմությունը» (5 հատոր), Մոսկվա և Լենինգրադ քաղաքների պատմությունները, ռուս գյուղացիության XVII—XX դարերի շարժումների վերին աստիճանի արժեքավոր պատմությունները և այդ շարժումներին վերաբերող արխիվային փաստաթղթերի հրատարակությունները, XIX դարի Ռուսաստանի բանվորական շարժման պատմության արխիվային փաստաթղթերի հինգհատորյակը, ՍՍՌՄ պատմության բազմահատորյակը, ռուսական առաջին ռևոլյուցիային նվիրված հարուստ գրականությունը, 1918—1920 թվականների քաղաքացիական պատերազմի պատմությունը (առայժմ երեք հատոր), «Всемирная история»-ի բազմահատորյակը, Մեծ Հոկտեմբերի 40-ամյակի կապակցությամբ լույս տեսած մի քանի տասնյակ արժեքավոր աշխատությունները, սովետական բոլոր ռեսպուբլիկաներում հրատարակված բազմաթիվ աշխատությունները՝ նվիրված թե՛ համապատասխան ժողովուրդների պատմությանը, սկսած ամենահին ժամանակներից, և թե՛ հատկապես ռևոլյուցիոն շարժումների պատմությանն այդ ռեսպուբլիկաներում։ Լուրջ հաջողություններ է ձեռք բերել պատմագրությունը նաև Սովետական Հայաստանում։

Եթե հանրագումարի բերենք սովետական ժողովուրդների պատմությանը նվիրված հարուստ գրականության գեթ կարևորագույն գործերը, չենք կարող չհանգել այն եզրակացության, որ գիտության այդ բնագավառում կատարված է ահագին աշխատանք, որ անցյալի հետ համեմատած մեր պատմագրության մեջ տեղի է ունեցել խոր հեղաշրջում, արմատական փոփոխման են ենթարկվել մեր պատմագիրների պատմափիլիսոփայական տեսակետներն ու նրանց ամբողջ աշխարհայացքը։ Սակայն պատմագիտությունը ետ է ընկնում սովետական ժողովրդի կուլտուրական առաջխաղացման ընդհանուր մակարդակից, նրա կուլտուրական զարգացման տեմպերից ու մտավոր աճի պահանջներից։ Պատմության ճակատի գործիչները պետք է ստեղծեն այնպիսի գործեր, որոնք ժողովրդական մասսաների բարոյական-քաղաքական դաստիարակության գործում խոշոր դեր խաղան, ընթերցող հասարակության շարքերում նույնքան բարձր հետաքրքրություն շարժեն, որքան գեղարվեստական գրականության լավագույն գործերը։

Ինչպես հայտնի է, մեր պատմագրության մեջ որոշ ժամանակ իշխում էր Մ. Ն. Պոկրովսկու հակագիտական վուլգար-սոցիոլոգիական դպրոցը, որը խանգարում էր պատմական գիտության զարգացմանը։ Այդ գործին պակաս վնաս չհասցրեց նաև անհատի պաշտամունքը։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմական XX համագումարը նոր, լայն հնարավորություններ ստեղծեց ինչպես գիտության մյուս բոլոր ճյուղերի, այնպես էլ պատմագիտության զարգացման համար։

Վերջին տարիներում սովետական պատմագրությունն արագ վերելք է ապրում, սակայն մեր անելիքները դեռևս շատ են։ Մեր խնդիրն է՝ ստեղծել լուրջ մենագրական և ընդհանրացնող գործեր ժողովուրդների անցյալի մասին։ Չպետք է մոռանալ, որ պատմությունը մարդկանց ինտերնացիոնալ ոգով դաստիարակելու և նրանց շարքերում ձեռներեցություն ու ակտիվություն տարա-

ծելու լավագույն զենքերից մեկն է։ Պատմագրությունը խոշոր դեր ունի կատարելու հասարակական բոլոր գիտությունների, և առանձնապես գեղարվեստական գրականության ասպարեզում։

Մեր օրերի միջազգային բարդ պայմանները, պատերազմի վտանգը, ռևիզիոնիզմի դեմ անողոքաբար պայքարելու անհրաժեշտությունը և ժողովրդական լայն մասսաների ակտիվությունը բարձր մակարդակի վրա պահելու մըշտական պահանջը կրկնապատկում են պատմագրության դերը մեր ամբողջ հասարակական-քաղաքական կյանքում։ Պահանջվում է համառ ու հետևողական պայքար իդեալիզմի և բուրժուական օբյեկտիվիզմի, ինչպես նաև դոգմատիզմի, բուրժուական նացիոնալիզմի ու ազգային նիհիլիզմի դեմ։

Սովետական պատմագրության հետագա հաջողությունների համար ստեղծված բարենպաստ պայմանները և քառասուն տարվա ընթացքում գիտության այդ ճյուղում ձեռք բերված լուրջ հաջողությունները լիովին երաշխավորում են պատմագրության նոր արագ վերելքը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներով։

ДОСТИЖЕНИЯ ИСТОРИОГРАФИИ СОВЕТСКИХ НАРОДОВ

ГАЙК АЗАТЯН

(Резюме)

В статье, на основании критического рассмотрения крупнейших работ советских историков за прошедшие 40 лет, показываются достижения нашей историографии и исторической науки, отмечаются их преимущества по сравнению с досоветской исторической литературой, вскрываются коренные недостатки и научная несостоятельность буржуазной историографии, особенно историографии эпохи империализма. Автор подчеркивает исключительную роль основоположника Советского государства и Коммунистической партии Советского Союза В. И. Ленина в развитии исторической науки. Говоря о новых задачах историков, автор указывает на необходимость борьбы против ревизионизма, буржуазного объективизма и национализма, а также национального нигилизма и догматизма.